ՀԱԱՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/7-1

ք. Երևան 15-ը մայիսի 2019թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Վ. Ուռուտյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2407388 (երկու միլիոն չորս հարյուր յոթ հազար երեք հարյուր ութսունութ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան,Տերյան 74	ք. Երևան,Վարդանանց 110
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 247010053103	Հ/Հ՝ 16300-7031509
ՀՎՀՀ՝ 01507028	ՀՎՀՀ՝ 01548908
Ռեկտոր՝	Տնօրեն՝
Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ	Տ. ՂԱՐԻԲՅԱՆ

Հավելված N 1
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/7-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժնի համար	Գնման առարկայի	
	անվանումը*	**հատկանիշները (տեխնիկական բնութագիր)**
1	Թուղթ A4	Թուղթ A4 ձևաչափի, 80գ/մ², սպիտակությունը ոչ պակաս քան 96%, բարձր խտությամբ, թելիկներ չպարունակող, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար, չափսը՝ 210մմx297մմ, փաթեթավորումը՝ գործարանային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 հատ, մեկ տուփի քաշը առնվազն՝ 2.5կգ:
2	Գունավոր թուղթ A4	Թուղթ A4 ձևաչափի, գունավոր, խտությունը՝ 80գ/մ², չափը՝ 210մմx297մմ, թռուցիկների տպագրության համար: Փաթեթավորումը՝ գործարանային թղթափաթեթով կամ տուփերով: Տուփի մեջ 10 գույն, 250 հատ:
4	Թուղթ A3	Թուղթ A3 ձևաչափի, 80 գ/մ²., սպիտակությունը ոչ պակաս քան 96%, բարձր խտությամբ, թելիկներ չպարունակող, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար, չափսը՝ 420մմx297մմ., փաթեթավորումը՝ գործարանային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 հատ, մեկ տուփի քաշը՝ առնվազն 2500 գ:
5	Թուղթ A1	Թուղթ A1 ձևաչափի (վատման), առնվազն 200 գր/մ² խտությամբ: Սպիտակ, օֆսեթ տիպի, չափսը՝ 594մմx841մմ, տուփը պարունակում է 100 թերթ:
7	Կալկա /յուղաթուղթ/	Մոմաթուղթ (կալկա), 1 մ² մակերեսի 40 գ զանգվածով, թափանցիկությունը՝ 45%, խոնավությունը՝ 6%, գլանափաթեթի երկարությունը՝ 20-40 մ, լայնությունը՝ 878մմ, գործարանային փաթեթավորմամբ: Բոլոր չափորոշիչների թույլատրելի շեղումը՝ 0.1%:
14	Էջաբաժանիչ պլաստիկից	Էջանիշ պլաստիկ, 12x45մմ, 7 գույն՝ յուրաքանչյուրից 25 հատ:
16	Մատիտ սև	Արտաքին տեսքը՝ սև փայտյա սրած, գրաֆիտով և ռետինով, պատված ջրադիմացկուն ներկով, կարծրությունը HB: Միջուկը՝ որակյալ, չփշրվող, մատիտի երկարությունը՝ 17-19 սմ:
20	Սրիչ	Պլաստմասսե սրիչ, նախատեսված գրաֆիտե մատիտներ սրելու համար, պահոցով, շեղբը՝ ամուր մետաղից, սրված:
21	Գրիչ գնդիկավոր կապույտ	Գրիչ գնդիկավոր՝ կապույտ, առանց շարժման մեխանիզմի, փակիչով: Միջուկի երկարությունը սովորականից երկար՝ առնվազն 17 սմ:
22	Գրիչ գնդիկավոր կարմիր	Գրիչ գնդիկավոր՝ կարմիր միջուկով, առանց շարժման մեխանիզմի, փակիչով:
23	Գրիչ գնդիկավոր սև	Գրիչ գնդիկավոր՝ սև միջուկով, առանց շարժման մեխանիզմի, փակիչով:
28	Վրձին նկարչական	Փայտյա պոչով, երկարամազ, 1-1.5 սմ լայնությամբ, նախատեսված գրասենյակային աշխատանքների համար:
34	Սեղմակ մեծ	Արտաքին տեսքը՝ մետաղական սև, լայնությունը 32 մմ, ստվարաթղթե տուփի մեջ 12 հատ:
35	Ամրակ փոքր	Գրասենյակային փոքր ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով: Թղթե դարսերը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ, առանց վերջիններս վնասելու, չեն քայքայվում: Երկարությունը՝ 28-33մմ: Մետաղալարի ընդհանուր երկարությունը՝ 9-10սմ, հաստությունը՝ առնվազն 0,8մմ: Տուփի մեջ՝ 100 հատ:
39	Շտրիխ	Արտաքին տեսքը՝ արագ չորացող մատիտի տեսքով, մետաղական ծայրով հերմետիկ փակվող կափարիչով, սրբագրման համար նախատեսված բավարար թանձրությամբ հեղուկ, որը նախատեսված է ձեռագիր և տպագիր տեքստերի սրբագրման համար: Ոչ ուժեղ սեղմման դեպքում ապահովում է սրբագրումը՝ շտկումը, հրավտանգ: Առնվազն 8 մլ:
42	Գրասենյակային սոսինձ /էմուլսիա/	Սոսինձ նախատեսված թղթեր, ստվարաթուղթ սոսնձելու համար, 1 կգ պլաստմասսե տարաներով (ПВА), ցրտադիմացկուն:
47	Քանոն եռանկյուն	Եռանկյուն քանոն՝ փայտե, 45⁰, գծաբաժանումներով, երկարությունը՝ 18սմ:
49	Գրասենյակային դանակ 9մմ	Գրասենյակային փոքր դանակ՝ թուղթ և ստվարաթուղթ կտրելու համար, պլաստմասսե պատյանով, սայրի լայնությունը առնվազն 9 մմ, սայրի երկարությունը՝ առնվազն 8սմ:
56	Ապակարիչ	Գրասենյակային ապակարիչ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթի դարսը քանդելու համար:
61	Թղթապանակ /ռեգիստր/	Թղթապանակ երկօղականի սև 40մմ կոշտ ստվարաթղթե կազմով, 340 x 270մմ չափերով, 70-80մմ կռնակի բարձրությամբ, ամրացման մետաղյա հարմարանքով, A4 ձևաչափի թղթերի համար: Կազմը՝ 2-4 մմ հաստությամբ ստվարաթղթից: Չափսերի թույլատրելի շեղումը՝ 3 %:
65	Թղթապանակ կոճկվող A4	Թղթապանակ պլաստիկ, A4 ձևաչափի թերթերի համար, ծրարատիպ, կափույրը կոճգամով ամրացվող: Գունավոր:
68	Ծրար C5	Փոստային ծրարներ C5 - 162x229 մմ ձևաչափի, ուղիղ կափույրով, հասարակ, կափույրի ինքնակպչուն շերտով, թղթի զանգվածը՝ առնվազն 80 գ/մ² և ավելի, ինքնասոսնձվող, դեղին կամ սպիտակ գույների: Փաթեթավորված 50 հատով:
69	Ծրար C4	Փոստային ծրարներ C4 - 229x324 մմ ձևաչափի, ուղիղ կափույրով, հասարակ, թղթի զանգվածը՝ առնվազն 80 գ/մ², ինքնասոսնձվող, դեղին կամ սպիտակ գույներ ի: Փաթեթավորված 50 հատով:
73	Սքոչ երկկողմանի սպունգանման	Չափերը՝ առնվազն 12 մմx20 մ, երկկողմանի սոսնձվածքով, սպունգանման, բարձր կպչողականությամբ:
77	Սքոչ մեծ թղթյա	Չափերը՝ առնվազն 48մմx92մ, սպիտակ և բարձր սոսնձվածքով:
78	Թղթադարան	Արտաքին տեսքը՝ սեղանի թղթադիր դարակ, մետաղական, հորիզոնական, A4 ֆորմատի թղթերի համար, 3 հարկանի, սև գույնի:
80	Ցուցատախտակ	Փայտյա շրջանակով, թափանցիկ ապակյա 2 դռներով, բանալիով փակվող: Չափսը՝ 1x1.5մ, ըստ պատվիրատուի պահանջի:

83	Թանաք	Թանաք կնիքի բարձիկի համար, ծավալը՝ առնվազն 30 մլ, կապույտ գույնի:
84	Թանաքի բարձիկ	Թանաքով ներծծված բարձիկներ, դրոշմակնիքների համար, տուփով, տուփի չափսը՝ N2 (միջին), կապույտ թանաքով:
85	Խոշորացույց	Հնգապատիկ, 75մմ տրամագիծ:

Ծանոթություն

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամ

Ռեկտոր

Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ

Տնօրեն՝

Տ. ՂԱՐԻԲՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի համար	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավոր գնման գինը /ՀՀ դրամ/	Մատակարարման ենթակա քանակն ըստ ամիսների (եռամսյակների) * (ոչ ուշ քան 31/05/2019թ.)							
						V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
1	30197622	Թուղթ A4	կգ	2 600,00	584	2 600,00							
2	30192740	Գունավոր թուղթ A4	կգ	6,50	1300	6,50							
4	30197646	Թուղթ A3	կգ	42,50	695	42,50							
5	30197638	Թուղթ A1	կգ	34,50	1100	34,50							
7	37821190	Կալկա /յուղաթուղթ/	մետր	130,00	250	130,00							
14	30192780	Էջաբաժանիչ պլաստիկից	հատ	25,00	550	25,00							
16	30192130	Մատիտ սև	հատ	350,00	29	350,00							
20	30192133	Սրիչ	հատ	70,00	60	70,00							
21	30192121	Գրիչ գնդիկավոր կապույտ	հատ	600,00	25	600,00							
22	30192121	Գրիչ գնդիկավոր կարմիր	հատ	60,00	25	60,00							
23	30192121	Գրիչ գնդիկավոր սև	հատ	120,00	25	120,00							
28	39221440	Վրձին նկարչական	հատ	3,00	500	3,00							
34	39263530	Սեղմակ մեծ	հատ	960,00	19	960,00							
35	30197220	Ամրակ փոքր	հատ	250,00	80	250,00							
39	30192160	Շտրիխ	հատ	50,00	160	50,00							
42	24911200	Գրասենյակային սոսինձ /էմուլսիա/	կգ	20,00	2200	20,00							
47	39292520	Քանոն եռանկյուն	հատ	14,00	450	14,00							
49	39241141	Գրասենյակային դանակ 9մմ	հատ	80,00	59	80,00							
56	30197340	Ապակարիչ	հատ	20,00	140	20,00							
61	30197234	Թղթապանակ /ռեգիստր/	հատ	500,00	500	500,00							
65	22851200	Թղթապանակ կոճկվող A4	հատ	20,00	89	20,00							
68	30199230	Ծրար C5	հատ	1 000,00	19	1 000,00							
69	30199232	Ծրար C4	հատ	500,00	29	500,00							
73	30192230	Սքոչ երկկողմանի սպունգանման	հատ	10,00	800	10,00							
77	30192210	Սքոչ մեծ թղթյա	հատ	2,00	600	2,00							
78	30193700	Թղթադարան	հատ	50,00	2300	50,00							
80	31521470	Ցուցատախտակ	հատ	4,00	52000	4,00							
83	30192114	Թանաք	հատ	41,00	120	41,00							
84	30192111	Թանաքի բարձիկ	հատ	16,00	290	16,00							
85	38651230	Խոշորացույց	հատ	1,00	350	1,00							

Ծանոթություն.

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը:

Մատակարարումն իրականացնել ք. Երևան, Տերյան 74 հասցեով:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամ

Ռեկտոր՝ Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմսրթլայն» ՍՊԸ

Տնօրեն՝ Տ. ՂԱՐԻԲՅԱՆ

Հավելված N 2
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/7-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափա-բաժնի համար	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավոր գնման գինը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ .՝ ըստ ամիսների, այդ թվում*								
						V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդամենը
1	30197622	Թուղթ A4	կգ	2 600,00	584	1518400	1518400	1518400	1518400	1518400	1518400	1518400	1518400	1518400
2	30192740	Գունավոր թուղթ A4	կգ	6,50	1300	8450	8450	8450	8450	8450	8450	8450	8450	8450
4	30197646	Թուղթ A3	կգ	42,50	695	29537.50	29537.50	29537.50	29537.50	29537.50	29537.50	29537.50	29537.50	29537.50
5	30197638	Թուղթ A1	կգ	34,50	1100	37950	37950	37950	37950	37950	37950	37950	37950	37950
7	37821190	Կալկա /յուղաթուղթ/	մետր	130,00	250	32500	32500	32500	32500	32500	32500	32500	32500	32500
14	30192780	Էջաբաժանիչ պլաստիկից	հատ	25,00	550	13750	13750	13750	13750	13750	13750	13750	13750	13750
16	30192130	Մատիտ սև	հատ	350,00	29	10150	10150	10150	10150	10150	10150	10150	10150	10150
20	30192133	Սրիչ	հատ	70,00	60	4200	4200	4200	4200	4200	4200	4200	4200	4200
21	30192121	Գրիչ գնդիկավոր կապույտ	հատ	600,00	25	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000
22	30192121	Գրիչ գնդիկավոր կարմիր	հատ	60,00	25	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
23	30192121	Գրիչ գնդիկավոր սև	հատ	120,00	25	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
28	39221440	Վրձին նկարչական	հատ	3,00	500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
34	39263530	Սեղմակ մեծ	հատ	960,00	19	18240	18240	18240	18240	18240	18240	18240	18240	18240
35	30197220	Ամրակ փոքր	հատ	250,00	80	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
39	30192160	Շտրիխ	հատ	50,00	160	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
42	24911200	Գրասենյակային սոսինձ /էմուլսիա/	կգ	20,00	2200	44000	44000	44000	44000	44000	44000	44000	44000	44000
47	39292520	Քանոն եռանկյուն	հատ	14,00	450	6300	6300	6300	6300	6300	6300	6300	6300	6300
49	39241141	Գրասենյակային դանակ 9մմ	հատ	80,00	59	4720	4720	4720	4720	4720	4720	4720	4720	4720
56	30197340	Ապակարիչ	հատ	20,00	140	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800
61	30197234	Թղթապանակ /ռեգիստր/	հատ	500,00	500	250000	250000	250000	250000	250000	250000	250000	250000	250000
65	22851200	Թղթապանակ կոճկվող A4	հատ	20,00	89	1780	1780	1780	1780	1780	1780	1780	1780	1780
68	30199230	Ծրար C5	հատ	1 000,00	19	19000	19000	19000	19000	19000	19000	19000	19000	19000
69	30199232	Ծրար C4	հատ	500,00	29	100%	14500	14500	14500	14500	14500	14500	14500	14500
73	30192230	Սքոչ երկկողմանի սպունգանման	հատ	10,00	800	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
77	30192210	Սքոչ մեծ թթյա	հատ	2,00	600	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200
78	30193700	Թղթադարան	հատ	50,00	2300	115000	115000	115000	115000	115000	115000	115000	115000	115000
80	31521470	Ցուցատախտակ	հատ	4,00	52000	208000	208000	208000	208000	208000	208000	208000	208000	208000
83	30192114	Թանաք	հատ	41,00	120	4920	4920	4920	4920	4920	4920	4920	4920	4920
84	30192111	Թանաքի բարձիկ	հատ	16,00	290	4640	4640	4640	4640	4640	4640	4640	4640	4640
85	38651230	Խոշորացույց	հատ	1,00	350	350	350	350	350	350	350	350	350	350
	Ընդամենը													2407388

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամ

Ռեկտոր՝

Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ

Տնօրեն՝

Տ. ՂԱՐԻԲՅԱՆ